Ավագ հատուկ ուսուցչի մասնագիտական ունակությունների թեստ

Հրահանգ

Ձեր առջև է թեստի էլեկտրոնային բուկլետը:

Թեստը ներառում է երեք տեսակի՝ ընտրովի պատասխաններով, համապատասխանության և բաց առաջադրանքներ (ընդհանուր առմամբ՝ 40 առաջադրանք):
Թեստի առավելագույն միավորն է՝ 54:

Յուրաքանչյուր տեսակի առաջադրանքների բլոկին նախորդում է հրահանգ: Ուշադիր կարդացեք դրանցից յուրաքանչյուրը, լավ ըմբռնեք, թե ինչ է պահանջվում առաջադրանքը կատարելու համար, որից հետո միայն ընտրեք կամ գրեք պատասխանը:

Թեստի վրա աշխատելու համար տրվում է 4 ժամ:

Մաղթում ենք հաջողություն:

Հաջորդ էջին անցնելու և ետ վերադառնալու համար կարող եք գործածել ստեղնաշարի հետևյալ կոճակները՝

Հրահանգ

Ընտրովի պատասխաններով առաջադրանքներին կից տրվում է չորս ենթադրական պատասխան, որոնցից միայն մեկն է ճիշտ: Առաջադրանքի էությունն ավելի լավ ըմբռնելու համար ուշադրություն դարձրեք հարցի ընդգծված, թավատառ արտահայտություններին:

Ընտրովի պատասխաններով առաջադրանքները գնահատվում են՝ մեկ միավոր:

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22
23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40

Առաջադրանք N 1

Հատուկ ուսուցիչը դասարանում հանդես է գալիս հատուկ կրթական կարիքներ ունեցող (ՀԿԿՈ) աշակերտի օգնականի (ասիստենտ) դերում: Այդ ընթացքում նա հաղորդակցվում է նաև այդ աշակերտի համադասարանցիների հետ:

Համաձայն ներառական ուսուցման սկզբունքների հատուկ ուսուցչի գործողությունը՝

ա) **ճիշտ չէ,** քանի որ հատուկ ուսուցչի պարտականությունն է օգնություն ցուցաբերել ՀԿԿՈ աշակերտին և այդ ժամանակը նա չպետք է տրամադրի աշակերտի համադասարանցիներին:

բ) **ճիշտ է,** քանի որ դրանով հատուկ ուսուցիչը կնպաստի ՀԿԿՈ աշակերտի և նրա համադասարանցիների մտերմացմանը և նրանց միջև գոյություն ունեցող հեռավորության կրճատմանը:

գ) **ճիշտ չէ,** քանի որ հատուկ ուսուցչի հետ հաղորդակցումը կարող է շեղել ՀԿԿՈ աշակերտի համադասարանցիների ուշադրությունը և խափանել դասապրոցեսը:

դ) **ճիշտ է,** քանի որ ՀԿԿՈ աշակերտի համադասարանցիների հետ հատուկ ուսուցչի դրական փոխազդեցությունը կնպաստի դասարանում զվարթ տրամադրության ստեղմանը:

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22
23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40

Առաջադրանք N 2

Աշակերտի կարողությունների և Ազգային ուսումնական պլանով (ԱՈՒՊ) նախատեսված պահանջների միջև գոյություն ունեցող տարբերությունը կրճատելու նպատակով դիմում են ԱՈՒՊ-ի հարմարեցմանը (ադապտացում): Հայտնի է ադապտացիայի երկու հիմնական տեսակ՝ ակոմոդացիա և մոդիֆիկացիա:

Թվարկածներից ո՞ր դրույթում է նկարագրված ԱՈՒՊ-ի ակոմոդացիան:

ա) Հատուկ կրթական կարիքներ ունեցող աշակերտի ուսուցում տարբերվող ռեսուրսներով և տարբերվող մոտեցմամբ, երբ պահանջները մնում են նույնը և փոխվում է միայն ռեսուրսների մատչելիությունը:

բ) Ազգային ուսումնական պլանով սահմանված նվաճվելիք արդյունքների քանակական կամ որակական փոփոխությունը, ինչը պահանջում է ուսումնական նպատակների կրճատում, ավելացում, պարզեցում կամ բարդացում:

գ) Հատուկ կրթական կարիքներ ունեցող աշակերտի համար միջավայրի և համատեքստի նախատեսմամբ այնպիսի նպատակների ընտրություն, որոնք ուղղված են ինքնուրույն կյանքի համար անհրաժեշտ ունակությունների զարգացմանը:

դ) Ազգային ուսումնական պլանով սահմանված այնպիսի նվաճվելիք արդյունքների ընտրություն, որոնք կնպաստեն աշակերտի կողմից յուրացված գիտելիքների կիրառմանը դպրոցի սահմաններից դուրս, տարբեր իրավիճակներում:

Առաջադրանք N 3

ՀԿԿՈ աշակերտին գնահատելիս ուսուցիչը բացահայտեց, որ աշակերտը դժվարանում է խմբավորել կատեգորիաների և անհրաժեշտ է աշխատել այդ հմտության շուրջ:

Ո՞ր ակտիվությունը **չի կարողանա** կատարել ՀԿԿՈ աշակերտը, այն դեպքում եթե դժվարանում է խմբավորել կատեգորիաների:

ա) Որոշել կոնկրետ երևույթի պատճառն ու դրա հետևանքները:

բ) Տրամաբանական հաջորդականությամբ դասավորել որոշակի երևույթները, սյուժեները և գործընթացները:

գ) Խմբավորել օբյեկտներն ըստ նմանատիպ բնութագրիչների:

դ) Որոշել փոխկապակցվածությունը քարտի վրա պատկերված երևույթների և շրջակա միջավայրում առկա օբյեկտների միջև:

Առաջադրանք N 4

ՀԿԿՈ աշակերտը սովորում է 4-րդ դասարանում: Նա դժվարանում է տարբերակել նմանատիպ ուրվագիծ ունեցող տառերը (ր-ի, ս-ռ, գ-դ և այլն) և ամբողջացնել ծանոթ տառերը երկտառ վանկում: Ուսուցիչը որպես կարճաժամկետ նպատակ մտադրվեց, որ աշակերտը կարողանա կարդալ բառեր չորրորդ դասարանի դասագրքում տրված տեքստերից: Նախանշված նպատակին հասնելու համար նա աշակերտին հաճախ խնդրում է կարդալ տարբեր բառեր տեքստերից, սակայն ասում է, որ աշակերտի մոտ առաջընթաց չի նկատվում:

Ի՞նչն է պատճառը, որ աշակերտի մոտ առաջընթաց **չի** նկատվում:

ա) Ուսուցիչը կիրառել է միայն մեկ տեսակի, միաբնույթ ակտիվություններ:

ծ) Ուսուցչի կիրառած ակտիվությունը ձանձրալի էր աշակերտի համար:

գ) Նախանշված նպատակին հասնելու համար ուսուցիչը կիրառել է ոչ ադեկվատ ռազմավարություն:

զ) Ուսուցիչն իր առջև աշակերտի կարողություններին անհամապատասխան և բարդ նպատակ է դրել:

Առաջադրանք N 5

Ուսուցչի կողմից աշակերտի զարգացնող գնահատման նպատակն է՝

ա) ուսանում-ուսուցման գործընթացում բացահայտել աշակերտի նկրտումներն ու հետաքրքրությունները:

ծ)ուսանում-ուսուցման գործընթացում օգնել, նպաստել անհատականորեն հարմարեցված առաջընթացին:

գ) նախապես սահմանված արդյունքների համապատասխան որոշել աշակերտի ակադեմիական առաջադիմության մակարդակը:

զ) ուսումնական տարվա ավարտին որոշել աշակերտի գիտելիքների մակարդակը կոնկրետ առարկայից:

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22
23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40

Առաջադրանք N 6

Աշակերտը տնից դպրոց եկավ նյարդայնացած և դասի ժամանակ սկսեց արտասվել: Ուսուցչը չէր ուզում ընդհատել ակտիվությունը և փորձելով հանգստացնել աշակերտին ասաց, որ նրա տարիքում ընդհանրապես չարժե որևէ պատճառով լուրջ անհանգստանալ:

Ուսուցչի վարքագիծը՝

ա) **ճիշտ է,** քանի որ եթե ուսուցիչն ավելի խորամուխ լիներ խնդրի մեջ և հավելյալ ու մանրամասն հարցեր հղեր աշակերտին, ապա չէր կարողանա շարունակել ակտիվությունը և դասը նույնպես կխափանվեր:

բ) **ճիշտ չէ,** քանի որ ուշադրությունը սևեռելով ուսուցիչն ավելի կամրապնդեր աշակերտի խնդրահարույց վարքը և ցանկալի արդյունքին հասնելու համար աշակերտը նույնկերպ կվարվեր այլ դեպքերում ևս:

գ) **ճիշտ է,** քանի որ ուսուցիչն անմիջապես հանգստացրեց աշակերտին, իր վարվելակերպով նրա համար անհրաժեշտ աջակցություն ապահովեց և հող նախապատրաստեց դասին ներգրավվելու համար:

դ) **ճիշտ չէ,** քանի որ ուսուցչի կողմից աշակերտի հույզերի արժեզրկումը նրա մոտ կարող է առաջացնել այն զգացումը, որ նրան չեն հասկանում, ինչը կվատթարացնի ուսուցչի հետ աշակերտի հարաբերությունները:

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22
23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40

Առաջադրանք N 7

ՀԿԿՈ աշակերտը թելադրության ժամանակ ինքնուրույն և ճիշտ կարող է գրել այբուբենի բոլոր տառերը, սակայն նրան չի հաջողվում գրել երկու տառից բաղկացած վանկը/բառը և խնդրում է հիշեցնել տառերի հաջորդականությունը:

Նկարագրված խնդիրը պայմանավորված է դժվարությամբ, որը կապված է՝

ա) հնչույթային (ֆոնեմատիկ) լսողության հետ

բ) խոսքի հնչակարգային (ֆոնոլոգիկ) վերլուծության հետ

գ) աչք-ձեռքի կոորդինացիայի հետ

դ) հնչյունի և տառի համապատասխանեցման հետ

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22
23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40

Առաջադրանք N 8



Լուսանկարում պատկերված ռեսուրսի կիրառումը կրթական ինչպիսի՞ կարիք ունեցող աշակերտի համար է համարվում **ամենաարդյունավետ** միջոցը:

ա) Այն աշակերտի համար, որը դժվարանում է ըմբռնել և սովորել մեծի (>) և փոքրի (<) մաթեմատիկական նշանները:

բ) Այն աշակերտի համար, որը դժվարանում է կարդալ հազվադեպ կիրառվող բառերը և ըմբռնել մաթեմատիկական տերմինները:

գ) Այն աշակերտի համար, որը դժվարանում է և ում շատ ժամանակ է պահանջվում աջ և ձախ կողմերի տարբերակումը սովորելու համար:

դ) Այն աշակերտի համար, որը դժվարանում է կատարել թվանշաններով գործողություններ և հաճախ է հիմնվում մատներով կամ կոնկրետ օբյեկտներով հաշվարկին:

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22
23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40

Առաջադրանք N 9

Թվարկածներից ո՞ր հանձնարարականը պետք է հաշվի առնի ուսուցիչը մտավոր զարգացման խանգարում ունեցող աշակերտին դասավանդելիս:

ա) Տալ առավելագույնս կոնկրետ հրահանգներ:

բ) Տալ միայն գրավոր հրահանգներ:

գ) Տալ երկ- և եռաստիճան ցուցումներ:

դ) Տրամադրել մասերի չբաժանված ուսումնական նյութ:

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22
23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40

Առաջադրանք N 10

Վարքային և հուզական խանգարումներ ունեցող աշակերտների դժվար վարքը կառավարելու նպատակով ուսուցիչները հաճախ կիրառում են պլանավորված անտեսման տեխնիկան:

Պլանավորված անտեսման տեխնիկան **ամենից շատ** նպատակահարմար է կիրառել այն դեպքում, երբ՝

ա) աշակերտը չի ցանկանում մասնակցել խնբային խաղին:

բ) աշակերտը ցանկանում է դասին զբաղվել ոչ դպրոցական իրերով:

գ) աշակերտը սադրիչ վարքով ցանկանում է գրավել ուսուցչի ուշադրությունը:

դ) աշակերտը չի ցանկանում կատարել ուսուցչի հանձնարարած ակտիվությունը:

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22
23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40

Առաջադրանք N 11

Աշակերտի անհատական կարիքների և առանձնահատկությունների նախատեսմամբ ուսանում-ուսուցման գործընթացում կիրառվում են տարբեր մոտեցումներ, որոնցից մեկն է համընդհանուր դիզանը:

Ստորև տրված պարզաբանումներից **ամենապատշաճ կերպով** ո՞րն է նկարագրում ուսուցման համընդհանուր դիզայնը:

Ուսուցման համընդհանուր դիզայնը ենթադրում է՝

ա) ֆիզիկական միջավայրը մոդիֆիկացնել այնպես, որ աշակերտները պաշտպանված լինեն ավելորդ գրգռիչներից և ստեղծվեն ուսուցման համար օպտիմալ պայմաններ:

բ) նյութը յուրացնելու նպատակով ՀԿԿՈ աշակերտներին այն մատուցել այնպիսի եղանակով, որը պահանջում է զգայական տարբեր մոդալությունների կիրառում:

գ) դասերը, նյութը, ռեսուրսը ծրագրել և պատրաստել այնպես, որ նախատեսված լինի յուրաքանչյուր աշակերտի ուսման անհատական ոճը:

դ) ուսուցման մեթոդները և ուսման ռեսուրսները կազմակերպել այնպես, որ հարմարեցված լինեն ցանկացած խանգարումներ ունեցող ՀԿԿՈ աշակերտների կարիքներին:

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22
23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40

Առաջադրանք N 12

Տարբերում են խոսքի երկու ասպեկտ՝ էքսպրեսիվ և իմպրեսիվ:

Թվարկածներից ո՞րն է մատնանշում, որ ՀԿԿՈ-ն աշակերտն ունի էքսպրեսիվ խոսքի դժվարություն:

ա) Աշակերտը դժվարանում է հղել հարցեր և անել մեկնաբանություններ:

բ) Աշակերտը դժվարանում է կռահել քարտի վրա պատկերված օբյեկտը:

գ) Աշակերտը դժվարանում է ըմբռնել հրահանգները և հետևել դրանց:

դ) Աշակերտը դժվարանում է հասկանալ ժեստերի նշանակությունը:

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22
23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40

Առաջադրանք N 13

Ո՞ր ռազմավարությունը/ռազմավարությունները պետք է կիրառի հատուկ ուսուցիչը Դաունի համախտանիշով տառապող աշակերտի ուսուցման գործընթացում:

I. Աշակերտին պետք է հանձնարարի մասերի բաժանված առաջադրանքներ և քայլ առ քայլ ապահովի նոր հրահանգով:
II. Պետք է կիրառի մուլտիմոդալ մոտեցում, որը ենթադրում է շոշափելով, լսողությամբ և տեսողությամբ ուսանում:
III. Աշակերտին պետք է թույլ տա, որպեսզի իր ուզած ժամանակ կամ ընդհանրապես չկատարի ուսուցչի հանձնարարած առաջադրանքը:

ա) Միայն I, բ) Միայն I և II, գ) Միայն II և III, դ) Միայն III:

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22
23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40

Առաջադրանք N 14

Ուսուցիչը նկատել էր, որ որոշ աշակերտներ չեն կարողանում յուրացնել ուսումնական նյութը, ուստի կորցնում են հետաքրքրությունն ու հեռանում ուսումնական գործընթացից: Ուսուցման գործընթացն արդյունավետ դարձնելու նպատակով նա մասերի բաժանեց նյութը և բաշխեց աշակերտներին՝ ըստ նրանց կարողությունների, ոմանց համար ավելացրեց նաև առաջադրանքը կատարելու ժամանակը:

Ուսուցչի գործողությունն իր առջև դրված նպատակին՝

ա) **համապատասխան է,** քանի որ ծրագիրը կազմելիս հավասարապես չեն նախատեսվել յուրաքանչյուր աշակերտի ունակությունները և ուսուցին ըստ իր հայեցողության ցանկացած պահի ուսումնական պրոցեսում կարող է մտցնել փոփոխություններ:

բ) **համապատասխան չէ,** քանի որ ուսուցիչը պետք է գործի ելնելով դասարանի հետաքրքրություններից և ուսումնական գործընթացը չպետք է խափանվի որևէ աշակերտի անհատական կարողությունների պատճառով:

գ) **համապատասխան է,** քանի որ ուսուցիչը պետք է կարողանա հարմարեցնել ուսումնական նպատակները և խնդիրները աշակերտի կարողություններին՝ ուսումնական պրոցեսում բոլոր աշակերտների ներգրավվածությունն ապահովու նպատակով:

դ) **համապատասխան չէ,** քանի որ ուսուցիչը պարտավոր է հետևել ուսումնական ծրագրերի տարածմանը և ապահովել, որպեսզի բոլոր աշակերտները հասնեն նույնպիսի ուսումնական արդյունքի:

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22
23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40

Առաջադրանք N 15

Անհատական ուսումնական պլանի մոնիթորինգը ուսանում-ուսուցմանն ուղեկցող գործընթաց է: Գոյություն ունեն հանձնարարականներ, որոնք անհրաժեշտ է նախատեսել լիարժեք մոնիթորինգի համար:

Թվարկածներից ո՞ր ակտիվությունը/ակտիվություններն են նկարագրում Անհատական ուսումնական պլանի մոնիթորինգի գործընթացը:

I. Յուրաքանչյուր թեման ավարտվելուց հետո ուսուցիչն ամփոփում է աշակերտի նվաճումները, նախանշված կարճաժամկետ նպատակների հետ կապված նկարագրում է աշակերտի կատարած աշխատանքի որակը:

II. Ուսուցիչը ևս մեկ անգամ մանրամասնորեն գնահատում է աշակերտի թույլ և ուժեղ կողմերը, կարողություններն ու կարիքները, մշակում համապատասխան հանձնարարականներ:

III. Ուսուցիչը հոգում է տարեվերջին նվաճվելիք արդյունքը մոդիֆիկացնելու մասին, միայն այն դեպքում, եթե աշակերտը հասնում է Անհատական ուսումնական պլանի կարճաժամկետ նպատակներին:

ա) Միայն I, բ) Միայն I և II, գ) Միայն II և III, դ) Միայն III:

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22
23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40

Հրահանգ

Համապատասխանության առաջադրանքները ներկայացված են աղյուսակի տեսքով: Աղյուսակը բաղկացած է երկու սյունակից: Սյունակներից մեկում տրված է պայմանը, մյուսում՝ ենթադրական պատասխանները: Սյունակներում տրված տեղեկությունները համապատասխանեցնեք իրար և պատասխանը գրեք պատասխանների թերթիկի վրա տրված աղյուսակում: Անպայման կարդացեք պատասխանի բոլոր տարբերակները: Հաշվի առեք, որ դրանցից որևէ մեկը կարող է համապատասխանել երկու պայմանի, կամ չհամապատասխանել ոչ մեկի:

Համապատասխանության առաջադրանքները գնահատվում են՝ մեկ միավոր:

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22
23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40

Առաջադրանք N 16

A սյունակում ներկայացված են ուսուցչի տարբեր արձագանքներն աշակերտի դժվար վարքի նկատմամբ, մինչդեռ B սյունակում՝ դժվար վարքի կառավարման տեխնիկաները: Համապատասխանեցրեք դրանք իրար:

Ուսուցչի արձագանքը (A)	Տեխնիկա (B)
I. «Նիկա,՛ երբ գրատախտակին օրինակներ եմ գրում, իսկ դու այդ ժամանակ աղմկում ես, ես չեմ կարողանում կենտրոնանալ, դժվարանում եմ աշխատել աղմուկի մեջ»:	ա) Անուղղակի կրկնության տեխնիկա ծ) «Ես» հաղորդագրության տեխնիկա
II. Երբ Նինոն առաջադրանքը կատարելու փոխարեն խաղում է, ուսուցիչ ասում է. «Տեսե՛ք, Լիկան արդեն սկսել է աշխատել, կեցցե՛ս, Լիկա»:	
III. ՀԿԿՈ աշակերտը չի ընդգրկվում խմբային աշխատանքի մեջ, ուսուցիչը մոտենում է խմբի անդամներին և դիմում նրանց. «Կեցցե՛ք, լավ եք կատարում առաջադրանքը»:	

** Համապատասխանությունները գրեք պատասխանների թերթիկի վրա տրված աղյուսակում: Գրեք պարզ և հստակ:*

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22
23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40

Առաջադրանք N 17

Սովորելու կարողությասն խանգարումը տարբերվում է յուրաքանչյուր երեխայի դեպքում, թեև նրանք կարող են ունենալ նաև ընդհանուր բնորոշիչներ:

A սյունակում ներկայացված են սովորելու հետ կապված դժվարությունների օրինակներ, մինչդեռ B սյունակում՝ սովորելու կարողության խանգարման տեսակները: Համապատասխանեցրեք դրանք իրար:

Սովորելու դժվարություն (A)	Խանգարման տեսակ (B)
I. Բնորոշ են թվանշանները յուրացնելու, դրանց նշանակությունը ըմբռնելու, պարզ մաթեմատիկական գործողություններ կատարելու խնդիրներ:	ա) Դիսլեքսիա ծ) Դիսկալկուլիա
II. Դժվարություն է ներկայացնում հազվադեպ գործածվող բառերի կարդալն ու կարդացածի ըմբռնումը:	
III. Դժվարություն է ներկայացնում չափման հետ կապված գործողությունների կատարումը, երկար ժամանակ է պահանջում ուղղությունները և կողմերը տարբերակելու ուսանումը:	

** Համապատասխանությունները գրեք պատասխանների թերթիկի վրա տրված աղյուսակում: Գրեք պարզ և հստակ:*

1 2 1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22

23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40

Առաջադրանք N 18

Ուսուցիչը ուսուցման բաղադրիչները պետք է փոփոխի նախատեսելով ՀԿԿՈ աշակերտի կարիքները:

A սյունակում ներկայացված են ուսումնական ակտիվություններ, մինչդեռ B սյունակում՝ ուսուցման բաղադրիչները: Համապատասխանեցրեք դրանք իրար:

Ուսումնական ակտիվություն (A)	**Բաղադրիչ (B)**
I. ՀԿԿՈ աշակերտը տնային աշխատանքի բովանդակությունը ոչ թե գրում, այլ նկարում է:	ա) Ձևի փոփոխում ծ) Բովանդակության փոփոխում
II. ՀԿԿՈ աշակերտը պատմելու փոխարեն տեքստի բովանդակությունը փոխանցում է դասավորելով սյուժետային նկարները ճիշտ հաջորդականությամբ:	
III. ՀԿԿՈ աշակերտը մաթեմատիկա առարկայից բազմապատկում-բաժանման վարժությունները կատարելու փոխարեն կատարում է գումարման և հանման գործողություններ:	

** Համապատասխանությունները գրեք պատասխանների թերթիկի վրա տրված աղյուսակում: Գրեք պարզ և հստակ:*

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22
23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40

Հրահանգ

Բաց առաջադրանքը պահանջում է տրված հարցի վերաբերյալ փաստարկված դատողություն: Ուշադիր կարդացեք առաջադրանքի պայմանը և հարցը: Հաշվի առեք, որ ձեր պատասխանը պետք է լինի կոնկրետ և համապատասխանի հարցին:

Պատասխանների թերթիկի վրա առաջադրանքի համապատասխան համարի երկայնքով հատուկ հատկացված տեղում գրեք ձեր պատասխանը՝ դուրս չգալով առաջադրանքի համար հատկացված տարածքից:

Յուրաքանչյուր բաց առաջադրանքի երկայնքով նշված է առավելագույն միավորը:

Հաշվի առեք՝ բաց առաջադրանքի պատասխանի մեջ խտրական տերմին գործածելու դեպքում կկորցնեք մեկ միավոր:

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22
23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40

Առաջադրանք N 19

Առավելագույն միավոր՝ 3

Հատուկ կրթական կարիքներ ունեցող աշակերտների ծնողների հետ հաղորդակցվելիս կարևոր է զգուշությամբ տրամադրել նրանց օբյեկտիվ տեղեկատվությունը: Հատուկ ուսուցիչը զրուցելիս պետք է հաշվի առնի, որ երեխայի վիճակի հետ կապված հարցը ծնողի համար կարող է շատ ցավոտ լինել, ուստի ծնողների հետ իրենց երեխաների մասին խոսելիս հարկավոր է կիրառել յուրահատուկ մեթոդներ:

- Նկարագրե՛ք այն մեթոդը, որը կօգնի հատուկ ուսուցչին երեխայի մասին օբյեկտիվ տեղեկությունը տրամադրել առանց ծնողին ցավ պատճառելու:
- Բացատրե՛ք, թե ինչու է այս մեթոդի կիրառումն արդյունավետ ՀԿԿՈ աշակերտի ծնողի հետ հաղորդակցվելիս:

Պատասխանը գրեք պատասխանների թերթիկի վրա առաջադրանքի համապատասխան համարի երկայնքով:

Առաջադրանք N 20

Առավելագույն միավոր՝ 3

Սովորելու կարողության խանգարում ունեցող աշակերտները երբեմն ունեն հիշողության պակաս (դեֆիցիտ)՝ դժվարանում են կրկնել տրամադրած տեղեկությունները և առաջադրանքները չեն կարողանում կատարել ճիշտ հաջորդականությամբ, ինչն ի վերջո բացասաբար է անդրադառնում նրանց ակադեմիական առաջադիմության վրա:

– Նկարագրե՛ք այն ռազմավարությունը, որը կօգնի ՀԿԿՈ աշակերտին հիշողությունը զարգացնելու հարցում:
– Հիմնավորե՛ք ձեր պատասխանը:

Պատասխանը գրեք պատասխանների թերթիկի վրա առաջադրանքի համապատասխան համարի երկայնքով:

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22
23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40

Առաջադրանք N 21

Առավելագույն միավոր՝ 3

Աշակերտն ունի ուշադրության կենտրոնացման դժվարություն: Ուսուցիչը բազմիցս նկատել է, որ նոր նյութը բացատրելուց հետո մոտ 4-5 րոպե անց, չնայած նրան, որ նյութը նրա համար հասկանալի է, աշակերտի ուշադրությունը շեղվում է՝ սկսում է ուսումնասիրել գրքի նկարազարդումները և չի հետևում դասապրոցեսին:

– Նկարագրե՛ք այն ռազմավարությունը, որը կօգնի ուշադրության կենտրոնացման խնդիրներ ունեցող աշակերտին առավել լավ ընդգրկվել դասապրոցեսին:
– Հիմնավորե՛ք ձեր նկարագրած ռազմավարության արդյունավետությունը:

Պատասխանը գրեք պատասխանների թերթիկի վրա առաջադրանքի համապատասխան համարի երկայնքով:

Հրահանգ

Ընտրովի պատասխաններով առաջադրանքներին կից տրվում է չորս ենթադրական պատասխան, որոնցից միայն մեկն է ճիշտ: Առաջադրանքի էությունն ավելի լավ ըմբռնելու համար ուշադրություն դարձրեք հարցի ընդգծված, թավատառ արտահայտություններին:

Ընտրովի պատասխաններով առաջադրանքները գնահատվում են՝ մեկ միավոր:

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22
23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40

Առաջադրանք N 22

Թվարկածներից հատուկ ուսուցչի ո՞ր գործողությունն է մատնանշում, որ նա պահպանում է մասնագիտական էթիկայի սկզբունքները:

ա) Ուսուցիչն աշակերտներից պահանջում է պահպանել դասարանի համար մշակված վարքի կանոնները:

բ) Ուսուցիչն ինքը խիստ պահպանում է դասարանում մշակված վարքի կանոնները և գործում դրանց համապատասխան:

գ) Ուսուցիչը վերահսկում է, թե ինչպես է ՀԿԿՈ աշակերտը պահպանում դասարանում մշակված վարքի կանոնները:

դ) Ուսուցիչը դասարանում փակցնում է ՀԿԿՈ աշակերտի խնդիրների նախատեսմամբ մշակված վարքի կանոնները:

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22
23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40

Առաջադրանք N 23

Կարդալ հնարավոր է սովորել նպատակաուղղված աշխատանքի արդյունքում և բավական բարդ լեզվաբանական գործընթաց է:

Թվարկածներից ո՞ր բազիսային հմտությունը/հմտություններն են **ամենից շատ** նպաստում կարդալ սովորելուն:

I. Ընթացակարգային հիշողություն

II. Տեսատարածական ունակություններ

III. Ֆոնեմիկ վերլուծություն և սինթեզ

ա) Միայն I, բ) Միայն I և III, գ) Միայն II, դ) Միայն II և III:

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22
23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40

Առաջադրանք N 24

Դասարանում կա երկու աշակերտ, որոնք անընդհատ վիճում են, երբ նստում են նույն նստարանի շուրջ: Հաճախ նրանց կոնֆլիկտը վերածվում է ֆիզիկական ագրեսիայի:

Թվարկածներից ո՞րն է **ամենաարդյունավետ** գործողությունը նկարագրված կրիզիսային իրավիճակը կառավարելու տեսանկյունից, եթե ուսուցիչը նկատում է, որ աշակերտները սկսել են վիճել:

ա) Ուսուցիչը պետք է կարողանա դադարեցնել աշակերտների միջև ծագած վեճը և նստեցնի նրանց առանձին-առանձին, իսկ դասն ավարտվելուց հետո անպայման զրուցի նրանց հետ և պարզի վեճի ծագման պատճառները:

բ) Ուսուցիչը պետք է նկատողություն տա աշակերտներին: Խնդրի նրանց անհապաղ դադարեցնել վեճը և հիշեցնի, որ նրանց վարքը խանգարում է դասի ընթացքին, որից հետո դպրոց հրավիրի ծնողներին:

գ) Դժվար վարք դրսևորելիս ուսուցիչն աշակերտներին չպետք է դարձնի ուշադրություն, հանգիստ շարունակելով դասը: Աշակերտներն իրենց խնդրահարույց վարքով պետք է չկարողանան գրավել ուսուցչի ուշադրությունը:

դ) Ուսուցիչը պետք է խնդրի աշակերտներին դադարեցնել վեճը: Ֆիզիկական ագրեսիա դրսևորելիս միշտ հանձնարարի նրանց կարգի բերել դասարանը, որպեսզի աշակերտները հետագայում չկրկնեն նման վարքը:

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22
23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40

Առաջադրանք N 25

Երեխաներին դպրոց փոխադրումը (տրանզիցիան) հաջողված համարվելու համար, այն պետք է բավարարի համապատասխան չափանիշները:

Թվարկածներից ո՞ր ցուցիչն է մատնանշում, որ աշակերտի տրանզիցիան դպրոցում հաջողությամբ **չի ընթանում**:

ա) Աշակերտն ընդգրկված է ուսումնական պրոցեսում, թեև երբեմն օգնություն է խնդրում ուսուցիչներից:

բ) Աշակերտը հաճախում է դասերին, սակայն դպրոցում գտնվելու ընթացքում դժվարանում է կողմնորոշնել ֆիզիկական տարածության մեջ:

գ) Աշակերտը մասնակցում է ակտիվություններին, պատասխանում է նաև հարցերին, սակայն ինքը հարցեր է տալիս միայն անհրաժեշտության դեպքում:

դ) Աշակերտը հասակակիցների հետ ներգրավված է կրթական գործընթացում, սակայն որոշակի առարկաներից ունի ուսման դժվարություններ:

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22
23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40

Առաջադրանք N 26

Դպրոցներում ռեսուրս սենյակի համապատասխան կերպով կահավորումն ու դասավորումը կարևոր է ՀԿԿՈ աշակերտի արդյունավետ ուսուցման համար:

Թվարկածներից ո՞ր պայմանը **չի համապատասխանում** ռեսուրս սենյակի կահավորման պահանջներին:

ա) Ռեսուրս սենյակում պետք է փակցված լինեն տարբեր տեսակի օժանդակ իրազննական նյութեր:

բ) Ռեսուրս սենյակում ՀԿԿՈ աշակերտների աշխատանքային տարածքը կահավորված պետք է լինի հարմարեցված կահույքով:

գ) Ռեսուրս սենյակը պետք է ունենա հանգստյան տարածք փափուկ հատակով և փափուկ կահույքով:

դ) Ռեսուրս սենյակում պատերը պետք է լինեն վառ, արտահայտիչ գույնի և պատուհաններից առատորեն թափանցեն արևի ճառագայթները:

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22
23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40

Առաջադրանք N 27

ADHD համախտանիշ ունեցող աշակերտները չեն կարողանում վերահսկել իրենց վարքը: Նման դեպքերում ուսուցիչները կիրառում են վարքային ցուցանշաններ, հիշեցնում են աշակերտներին, թե ինչ են ակնկալում նրանցից ուսման և վարքի տեսանկյունից:

Թվարկած ակտիվություններից ո՞ր դեպքում/դեպքերում է կիրառում ուսուցիչը վարքային ցուցանշանները:

I. Ուսուցիչն աշակերտի հետ հաստատում է տեսողական կոնտակտ, մոտենում է նրա նստարանին և հաղորդակցվելիս կիրառում է նրա հետ համաձայնեցված ժեստային ազդանշաններ:

II. Ուսուցիչն աշակերտին խորհուրդ է տալիս զերծ մնալ այն կոնկրետ գրգռիչից, որի պատճառով շեղվում է նրա ուշադրությունը:

III. Ուսուցիչն ուշադրություն չի դարձնում աշակերտի ոչ ցանկալի վարքին և դասարանին տեսանելի կերպով ցույց է տալիս առաջադրանքը կատարելու նմուշը:

ա) Միայն I, բ) Միայն I և II, գ) Միայն II և III, դ) Միայն III:

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22
23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40

Առաջադրանք N 28

Աշակերտներին մոտիվացնելու համար մեծ նշանակություն ունի ճիշտ մատուցված հետադարձ կապը:

Թվարկածներից **ամենաքիչը** ո՞ր խորհուրդն է պետք հաշվի առնել, որպեսզի հետադարձ կապն ունենա ցանկալի արդյունք:

ա) Հետադարձ կապն աշակերտին պետք է տրամադրվի անմիջապես:

բ) Հետադարձ կապը պետք է արտացոլի ուսուցչի ակնկալիքը:

գ) Հետադարձ կապը ստույգ պետք է նկարագրի, թե ինչ է հաջողվել երեխային:

դ) Հետադարձ կապը ձևակերպված պետք է լինի երեխայի համար հասկանալի ձևով:

Առաջադրանք N 29

Ակնկալվող նորությունն աշակերտին ներկայացնելու համար կիրառված միջոցները պետք է լինեն բազմազան և մուլտիմոդալ: Նման մեթոդներից է սոցիալական պատմությունները:

Թվարկված պարզաբանումներից լիարժեք կերպով ո՞րն է նկարագրում սոցիալական պատմության բովանդակությունը:
Սոցիալական պատմությունը պետք է նկարագրի.

ա) իրավիճակի առանձնահատկությունները՝ ինչ է տեղի ունենում կամ ինչ է տեղի ունենալու տվյալ իրավիճակում, ինչպես է վարվելու այդ ժամանակ աշակերտը:

բ) աշակերտի կարողություններն ու ունակությունները, որոնք հարկավոր կլինեն նրան համատեքստի նախատեսմամբ կոնկրետ իրավիճակում:

գ) քարտերի վրա պատկերված իրավիճակների հետ կապված մարտահրավերները, որոնք անհրաժեշտ է նախատեսել նոր միջավայրում:

դ) անհատական կարիքները, որոնք կարող են առաջանալ աշակերտի մոտ նոր միջավայր փոխադրվելու (տրանզիցիայի) ընթացքում:

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22
23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40

Առաջադրանք N 30

Հատուկ ուսուցիչն աշակերտի հիշողությունը գնահատելու նպատակով նրան բազմաբնույթ ակտիվություններ է առաջարկել:

Թվարկածներից **ամենից լավ** ո՞ր ակտիվությամբ է հնարավոր գնահատել աշակերտի հիշողությունը:

ա) Աշակերտը խմբավորում է օբյեկտները որևէ կատեգորիայի մեջ, այնուհետև անվանում է այն օբյեկտը, որը չի պատկանում այդ կատեգորիային:

բ) Քարտերը ցուցադրելիս աշակերտն ուշադրությունը սևեռում է դրանց դրա պատկերված առարկաներին, որից հետո բանավոր թվարկում է դրանք:

գ) Տրամադրած սյուժետային քարտերն աշակերտը տրամաբանորեն կապում է իրար և ստեղծում պատմվածք:

դ) Անվանած բառերը լսելուց հետո աշակերտը մտածում և անվանում է դրանց հոմանիշները:

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22
23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40

Առաջադրանք N 31

Հատուկ ուսուցիչը ՀԿԿՈ աշակերտին գրել սովորեցնելու նպատակով կիրառել է նուրբ շարժողականությունը զարգացնող ակտիվություններ:

Թվարկածներից ո՞ր ակտիվությունն է **ամենից շատ** նպաստում նշված հմտության զարգացմանը:

ա) Աշակերտը մագնիսային գրատախտակի վրա շարժական այբուբենով կազմում է բառեր ըստ նմուշի:

բ) Աշակերտն անվանած բառերին համապատասխան նկարներ է սոսնձում տետրում:

գ) Աշակերտն ըստ նմուշի ծեփում է տառեր և գունավորում պահպանելով եզրագծերը:

դ) Աշակերտը բացում է պայուսակը, հանում է պայուսակից տետրը և թերթում է այն:

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22
23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40

Առաջադրանք N 32

Թվարկածներից ո՞ր բաղադրիչը **ներառված չէ** ՀԿԿՈ աշակերտի Անհատական ուսումնական պլանում:

ա) Տնային ուսուցման ժամանակացույց

բ) Անհատական հաճախումների ժամանակացույց

գ) Աշակերտին անհրաժեշտ ակոմոդացիաներ

դ) Աշակերտին անհրաժեշտ հանձնարարականներ

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22
23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40

Առաջադրանք N 33

Դրական, աշակերտակենտրոն կրթական միջավայր ստեղծելու նպատակով ուսուցիչը նախապես ծրագրված դասարանային ակտիվության մեջ ընդգրկեց նաև հատուկ կրթական կարիք ունեցող աշակերտին:

Ուսուցչի գործողությունն իր առջև դրված նպատակին՝

ա) **համապատասխան է,** քանի որ ընդհանուր դասարանային ակտիվությունները նպաստում են ՀԿԿՈ աշակերտի ինտեգրմանը դասարանում:

բ) **համապատասխան չէ,** քանի որ եթե ՀԿԿՈ աշակերտը չկարողանա կատարել առաջադրանքը, հնարավոր է համադասարանցիները ծաղրեն նրան:

գ) **համապատասխան է,** քանի որ ընդհանուր դասարանային ակտիվությունները նպաստում են ՀԿԿՈ աշակերտի կոգնիտիվ հմտությունների զարգացմանը:

դ) **համապատասխան չէ,** քանի որ նման վարվելակերպը կարող է հանգեցնել ՀԿԿՈ աշակերտի անկանխատեսելի վարքագծի:

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22
23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40

Առաջադրանք N 34

Թվարկածներից ո՞ր բաղադրիչը/բաղադրիչները պետք է վերլուծի հատուկ ուսուցիչը գրելու ակադեմիական կարողությունները լիարժեք գնահատելու համար:

I. Գնահատի մոտորային/շարժողական բաղադրիչը, ուղղագրության կանոնները պահպանելու և բովանդակությունը փոխանցելու կարողությունը:

II. Գնահատի տառերը գրաֆիկորեն պատկերելու, դրանց չափն ու ձևը պահպանելու և գրվածը տարածականորեն դասավորելու կարողությունը:

III. Գնահատի գլխավոր բաղադրիչի՝ գրվածից հեղինակի կարծիքը ըմբռնելու, հիմնական գաղափարը բացահայտելու և վերլուծելու կարողությունը:

ա) Միայն I, բ) Միայն I և II, գ) Միայն II և III, դ) Միայն III:

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22
23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40

Առաջադրանք N 35

Ուսուցիչը մտնում է դասարան և տեսնում է, որ աշակերտներից մեկը մյուսից խլել է գիրքը և պատռում է այն: Ուսուցիչը խլում է գիրքն աշակերտից և խիստ դիմում է նրան. «Միշտ այսպես ես վարվում, չի՛ կարելի: Եթե ես պատռեմ քո գիրքը, քեզ դո՞ւր կգա»:

Ուսուցչի գործողությունը՝

ա) **ճիշտ է,** քանի որ ուսուցիչն անմիջապես միջամտելով դադարեցրեց աշակերտի խնդրահարույց վարքը: Այս դեպքում կարևորը հենց խնդրահարույց վարքի դադարեցումն է, որպեսզի այն չվերածվի աշակերտների միջև ֆիզիկական բախման:

բ) **ճիշտ չէ,** քանի որ աշակերտի նկատմամբ խիստ և բարձր տոնով նպատակահարմար է խոսել այն դեպքում, երբ նա չի ենթարկվում ուսուցչին: Այս դեպքում դա բոլորովին անտեղին է:

գ) **ճիշտ է,** քանի որ ուսուցիչն աշակերտին ակնարկեց, որ հնարավոր է նա նույնպես դառնա նման վերաբերմունքի օբյեկտ, ինչը նրա համար շատ տհաճ կլինի: Դրանով ուսուցիչն աշակերտին հստակ ցույց տվեց, թե որքան անընդունելի է նրա այդ արարքը:

դ) **ճիշտ չէ,** քանի որ դասարանի առաջ աշակերտին մեղադրելը կարող է նպաստել ուսուցչի նկատմամբ նրա բացասական վերաբերմունքի ձևավորմանը և իրավիճակը կարող է ամբողջությամբ չկարգավորվել:

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22
23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40

Առաջադրանք N 36

Դասարան է տեղափոխվում ՀԿԿՈ աշակերտ և ուսուցիչը փորձում է նախապատրաստել համադասարանցիներին նրա հետ հանդիպման համար, ինչը կարևոր է բարյացակամ մթնոլորտ ձևավորելու համար:

Թվարկածներից ուսուցչի ո՞ր գործողությունը/գործողությունները կնպաստեն դասարանում բարյացակամ վերաբերմունքի ձևավորմանը:

I. Ուսուցիչը դասարանում պետք է անցկացնի «Խտրություն և հանդուրժողականություն» թեմայով բանավեճ:
II. Ուսուցիչը պետք է ծրագրի ՀԿԿՈ աշակերտի և նրա համադասարանցիների համար համատեղ ակտիվություններ:
III. Ուսուցիչը պետք է զերծ մնա ՀԿԿՈ աշակերտի կարիքների մասին խոսելուց:

ա) Միայն I, բ) Միայն I և II, գ) Միայն II և III, դ) Միայն III:

Հրահանգ

Բաց առաջադրանքը պահանջում է տրված հարցի վերաբերյալ փաստարկված դատողություն: Ուշադիր կարդացեք առաջադրանքի պայմանը և հարցը: Հաշվի առեք, որ ձեր պատասխանը պետք է լինի կոնկրետ և համապատասխանի հարցին:

Պատասխանների թերթիկի վրա առաջադրանքի համապատասխան համարի երկայնքով հատուկ հատկացված տեղում գրեք ձեր պատասխանը՝ դուրս չգալով առաջադրանքի համար հատկացված տարածքից:

Յուրաքանչյուր բաց առաջադրանքի երկայնքով նշված է առավելագույն միավորը:

Հաշվի առեք՝ բաց առաջադրանքի պատասխանի մեջ խտրական տերմին գործածելու դեպքում կկորցնեք մեկ միավոր:

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22
23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40

Առաջադրանք N 37

Առավելագույն միավոր՝ 3

Դպրոցում հաճախ հանդիպում ենք տարբեր տեսակի խանգարումներ և սահմանափակումներ ունեցող աշակերտների, սակայն ոչ բոլորն ունեն ՀԿԿՈ աշակերտի կարգավիճակ: Նրանցից ոմանց դա հարկավոր չէ, մինչդեռ որոշ աշակերտների ծնողներ, չնայած անհրաժեշտությանը, հրաժարվում են իրենց երեխաներին ՀԿԿՈ աշակերտի կարգավիճակ շնորհելուց:

– Մտորե՛ք, թե ինչ բացասական հետևանքի կարող է հանգեցնել ծնողների նման որոշումը:
– Հիմնավորե՛ք ձեր պատասխանը:

Պատասխանը գրեք պատասխանների թերթիկի վրա առաջադրանքի համապատասխան համարի երկայնքով:

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22
23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40

Առաջադրանք N 38

Առավելագույն միավոր՝ 3

«Երբ մեծերը քեզ պատժելու որոշում կկայացնեն, չարժե դիմադրել: Հաշվետու են լինում միայն նրանց նկատմամբ ում հավանում են, մինչդեռ ես դեռևս չեմ հանդիպել որևէ մեկի, ով հավանում է ինձ: Ինչ հիշում եմ ինձ, բոլորին հիասթափեցնում եմ»:

«Հերոսը գիշերային ավտոբուսում»: Օնջալի Ռաուֆ:

– Նկարագրե՛ք այն ռազմավարությունը, որը կիրառելով ուսուցիչը կօգնի աշակերտին բարձրացնել ինքնագնահատականը:
– Հիմնավորե՛ք ձեր պատասխանը:

Պատասխանը գրեք պատասխանների թերթիկի վրա առաջադրանքի համապատասխան համարի երկայնքով:

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22
23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40

Առաջադրանք N 39

Առավելագույն միավոր՝ 3

Ընդգծված և լուրջ դժվարություններ ունեցող ՀԿԿՈ աշակերտների մոտ հաճախ չի հաջողվում զարգացնել ակադեմիական հմտություններն այն որակով, որ նրանք ևս կարողանան ընդգրկվել ուսումնական պրոցեսում իրենց հասակակիցների հետ: Նման դեպքերում կարևոր է, որ նրանք տիրապետեն գործառնական (ֆունկցիոնալ) հմտություններին (ֆունկցիոնալ գրելու, կարդալու և մաթեմատիկական հմտություններ):

– Նկարագրե՛ք մեկ ակտիվություն, որը կօգնի ՀԿԿՈ աշակերտին ֆունկցիոնալ ակադեմիական հմտությունների յուրացման հարցում:
– Բացատրե՛ք, թե ինչպես կօգնի ձեր նկարագրած ակտիվությունը ՀԿԿՈ աշակերտին ադապտացվելու հարցում:

Պատասխանը գրեք պատասխանների թերթիկի վրա առաջադրանքի համապատասխան համարի երկայնքով:

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22
23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40

Առաջադրանք N 40

Առավելագույն միավոր՝ 3

Վրացերենի դասին ՀԿԿՈՒ աշակերտի կողքին էր անձնական օգնականը: Ուսուցիչն աշակերտներին հանձնարարեց վերլուծել ընթերցած տեքստը և փոխանցել հիմնական գաղափարը, իսկ ՀԿԿՈՒ աշակերտի օգնականին դիմեց. «Այս առաջադրանքը նրա համար բարդ է, դասարանի աշակերտներից հետ չմնալու նպատակով օգնիր նրան և դու գրիր»:

– Նկարագրե՛ք, թե ինչպես պետք է վարվի անձնական օգնականը տվյալ իրավիճակում՝ իր պարտականությունն առավելագույն արդյունավետությամբ կատարելու համար:
– Հիմնավորե՛ք ձեր պատասխանը:

Պատասխանը գրեք պատասխանների թերթիկի վրա առաջադրանքի համապատասխան համարի երկայնքով:

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22
23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40